
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ. Հայաստանը Վ. Բրյուսովի գրական-հասարակական գործունեության մեջ, *Երևան, ՀՀ ԳԱԱ “Գիտություն” հրատ., 2016, 168 էջ:*

Ռուս նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, գրաքննադատ, պատմաբան Վալերի Բրյուսովի (1873–1924) Հայաստանի, հայ մշակույթի հետ ունեցած առնչությունների մասին հրատարակվել են բազմաթիվ գրքեր, հոդվածներ, հրապարակումներ. վերջերս դրանց ավելացավ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանի “Հայաստանը Վ. Բրյուսովի գրական-հասարակական գործունեության մեջ” վերտառությամբ ռուսերեն աշխատությունը: Շքեղ ու գեղեցիկ կազմով այս գիրքը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և - ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ԳԱԱ հայագիտական հետազոտությունների համահայկական հիմնադրամի աջակցությամբ:



АРМЕНИЯ
В ЛИТЕРАТУРНО - ОБЩЕСТВЕННОЙ
ДЕЯТЕЛЬНОСТИ В. БРЮСОВА

Մենագրության նախաբանում Ս. Զաքարյանը համառոտ խոսում է ռուս բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ ու քննադատ Յուրի Վեսելովսկու հայ գրականությանը, Հայաստանին ու հայ ժողովրդին առնչվող գիտահետազոտական, ստեղծագործական, թարգմանչական գործունեության, ինչպես նաև՝ համիդյան դարաշրջանում թրքահայության դժոխային վիճակին ու Հայոց ցեղասպանությանը նվիրված նրա ուսումնասիրությունների ու հրապարակումների մասին: Անդրադառնում է նաև նշանավոր գրող ու թատերագիր Մաքսիմ Գորկու հայանպաստ գործունեությանը, Անդրկովկասում ցարի կողմից հայ-թաթարական ընդհարումներ հրահրելու, Արևմտյան Հայաստանի, Հայոց ցեղասպանության նկատմամբ Գորկու ունեցած վերաբերմունքին: Ներկայացվում են սույն աշխատությունը գրելու շարժառիթներն ու նպատակները:

Առաջին գլխի՝ “Վ. Բրյուսովը՝ հայ պոեզիայի հետազոտող և քարոզիչ” առաջին բաժնում (“Բաքվի օրեր”) նախ անդրադարձ է արվում “Հայաստանի պոեզիա” ժողովածուն կազմելուն, հայ պոեզիայի դասականների գործերը

ռուսերեն թարգմանելուն ու դրա ժողովրդականացման ուղղությամբ Բրյուսովի կատարած տիտանական աշխատանքին: Նահապետ Քուչակից ու Սայաթ-Նովայից կատարած և “Ռուսկայա միալ”-ի 1915 թ. սեպտեմբերյան համարում “Աշուղների երգերը” խորագրով տպագրած թարգմանությունների առաջաբանում Բրյուսովը գրում է. “Այժմյան պատերազմը նորից հերթի դրեց համարյա երկու հազարամյակ “Ասիայում Եվրոպայի ավանգարդը” եղած ժողովրդի ճակատագրի հարցը” (էջ 16): Իսկ 1915 թ. հոկտեմբերին Մոսկվայում “Ալպիյսկայա Ռոշչա” ռեստորանի սրահում հայ հին, միջնադարյան ու նոր պոեզիայի մասին կարդացած զեկուցման մեջ նա արձանագրում է. “Այժմ, երբ ես բնագրով ծանոթ եմ Նարեկացուն, Աղթամարցուն, Նահապետ Քուչակին, Սայաթ-Նովային, Թումանյանին, Իսահակյանին, Ծատուրյանին, Հովհաննիսյանին, Տերյանին և հայ մյուս բանաստեղծներին, – միայն այժմ եմ հասկանում, թե ինչպիսի թանկարժեք գանձ է թաքցվել ռուս հասարակայնությունից: Բնձ թվում է, թե մեր առջև փակ է եղել զարմանահրաշ դրախտ տանող մի դուռ, որի գոյությանը մենք լիովին անտեղյակ էինք” (էջ 16–17):

Այս բաժնում այնուհետև խոսվում է Բաքվում Բրյուսովի կարդացած հրապարակային զեկուցման մասին՝ “Հայկական պոեզիա” վերնագրով: Ներկայացված է զեկուցման ընթացքը՝ ըստ ներկաների վկայությունների. ընթերցելով աշխատության այս հատվածը՝ տեսնում ենք երախտագետ հայ ժողովրդի ջերմ ու հիացական վերաբերմունքն իր մեծ բարեկամի նկատմամբ: Իմանում ենք նաև նրա պատվին Բաքվի “Հայ գրասերների ընկերության” կողմից տրված հանդիսավոր ճաշկերույթի մասին: Մեջբերենք դրա բացման ժամանակ ընկերության նախագահ Տիգրան Հովհաննիսյանի երախտագիտության և գնահատանքի ելույթից մի հատված. “... հայ ժողովրդին մատուցած Ձեր ծառայության նշանակությունը կրկնապատկվում է նրանով, որ Դուք մտածող Ռուսաստանի ուշադրությունը հրավիրեցիք հայ պոեզիայի գեղեցկությունների վրա՝ նրա վշտալի պատմության ամենաողբերգական պահին” (էջ 25): Պատասխան խոսքում Բրյուսովը շեշտում է. “... հայությունը բարձր արժեքներ է արտադրել և նրանով կարող են պարծենալ մեծ ազգերը ևս”, ու այդ պատճառով, շարունակում է նա, հայ գրականության թարգմանությանը նվիրել են իրենց Մ. Գորկին, Ա. Բլոկը, Կ. Բալմոնտը, Վ. Իվանովը և այլք” (էջ 25–26): Աշխատության այս մասում նաև անդրադարձ կա Բաքվում ռուս գրողի այցելած վայրերի և ունեցած ջերմ հանդիպումների մասին:

Առաջին գլխի երկրորդ՝ “Վ. Բրյուսովը Թիֆլիսում” բաժնում նկարագրված է Բրյուսովի այցը Թիֆլիս, Թումանյանների տանը հյուրընկալվելը:

Բնականաբար, ավելի մանրամասը ներկայացվում է բանաստեղծի՝ հայ պոեզիային նվիրված զեկուցումը: Բրյուսովն այսպիսի գնահատական է տալիս մեր բանաստեղծական արվեստին. «Հայ ժողովրդի պոեզիան՝ հին, նշանակալից ու ապշեցուցիչ՝ զեղեցկությամբ և ուժով, հայ ազգի ազնվականության վկայականն է: Այդպիսի պոեզիա ստեղծած ազգն ու երկիրը՝ չնայած անմարդկային տառապանքներին, անլուր աղետների մեջ ողորմ վեհությունը այդպես վառ դրսևորած ազգը, այդպիսի ազգը կարող է համոզված լինել անմահության մեջ» (էջ 32): Խոսք կա նաև Բրյուսովի պատվին «Հայ գրողների կովկասյան ընկերության» կողմից տրված ճոխ ճաշկերույթի մանրամասների մասին: Մենագրության այս մասում տեղ է հատկացված Բաքվում ու Թիֆլիսում մեծ հայասերի կարդացած զեկուցումների վերաբերյալ Անդրկովկասի հայկական, ռուսական ու վրացական մամուլում եղած բազմաթիվ արձագանքներին:

Առաջին գլխի երրորդ հատվածում («Դասախոսություններ Էջմիածնում, Երևանում և Թիֆլիսում») ներկայացվում են Էջմիածնում ու Երևանում Բրյուսովի եղած օրերն ու կարդացած դասախոսությունները, հայոց հայրապետի ու հայ մտավորականության հետ ունեցած շփումները, ինչպես նաև Թիֆլիսում «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» վերնագրով կարդացած դասախոսությունը: Աշխատության հեղինակն ընդգծում է Բրյուսովի անդրկովկասյան այցի ու դասախոսությունների բացառիկ նշանակությունը հայ ժողովրդի կյանքում պատմական այդ ծանր ժամանակահատվածում, անդրադառնում է նրա գրչին պատկանող՝ հայ ժողովրդի պատմական ուղին, բնությունը, սպասումներն ու հույսերն արտացոլող բանաստեղծությունների շարքին՝ բնութագրելով դրանցից մի քանիսը: Առանձին խոսք կա նաև 1916 թ. Մոսկվայում ու Պետրոգրադում հայ պոեզիայի վերաբերյալ Բրյուսովի կարդացած դասախոսությունների մասին:

Մենագրության երկրորդ գլխում, որը վերնագրված է «Հայաստանի պոեզիա» ժողովածուն (քննադատական նկատառումներ)», խոսվում է ժողովածուի կազմմանը մասնակցություն ունեցած անձանց, այդ թվում՝ Մոսկվայի Հայկական կոմիտեի մասին: Բովանդակալից ու հանգամանալից քննական հայացք կա հայ ժողովրդի պատմությանը և բանաստեղծությանը նվիրված Վ. Բրյուսովի տեսակետների և մոտեցումների վերաբերյալ: Անշուշտ, խոսք կա նաև նրա կատարած բազմաբնույթ աշխատանքի, ինչպես և մյուս թարգմանիչների՝ Յուրի Վեսելովսկու, Իվան Բունինի, Կոնստանտին Բալմոնտի, Վյաչեսլավ Իվանովի, Ալեքսանդր Բլոկի և այլոց մասին: Տեղեկություններ են տրվում ժողովածուի կառուցվածքի վերաբերյալ, համառոտ վերաշա-

րադրվում է դրա բովանդակությունը: Այս հատվածում տեղ է գտել նաև Բրյուսովի արտահայտած ինչ-ինչ մտքերի, կատարած վերլուծությունների, նրա որոշ տեսակետների վերաբերյալ Ա. Ջաքարյանի քննադատական խոսքը: Ընդգծված է ժողովածուի գրապատմական խոշոր նշանակությունը: Բերված է հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ ռուս բանաստեղծի անկեղծ մտահոգությունը բնութագրող հետևյալ խոսույն մեջբերումը. «Պետք են համաշխարհային աղետներ, պետք են թուրքական ջարդի անօրինակ արհավիրքները կամ մի ամբողջ ազգի վայրի հալածանքը (որ, օրինակ, տեղի ունեցավ ներկա մեծ պատերազմի սկզբին), որպեսզի մենք նորից ուշադրություն դարձնենք «բազմաչարչար ժողովրդի» աղետներին: Մենք՝ ռուսներս, ինչպես և ամբողջ Եվրոպան, հայերին հիշում ենք միայն այն օրերին, երբ նրանք կարիք են ունենում օգնության՝ որպեսզի փրկվեն սուլթանի գազազած ռեհակների կողմից գլխովին կոտորվելուց: Մինչդեռ հայերը մեր ուշադրության և ամբողջ աշխարհի ուշադրության ավելի մեծ իրավունքն ունեն. դա այն բարձր կուլտուրան է, որ մշակել է հայ ժողովուրդն իր անկախ գոյության երկար դարերի ընթացքում և այն վերին աստիճանի հարուստ գրականությունը, որը Հայաստանի թանկարժեք ավանդն է մարդկության ընդհանուր գանձարանում» (էջ 105–106):

Երրորդ գլխում [“Դասախոսություններ Բաքվում (հունվար 1917)”, հեղինակն անդրադառնում է 1917 թ. Բաքվում Բրյուսովի կարդացած “Էմիլ Վերհարներ և հերոսական Բելգիան” թեմայով դասախոսությանը և “Ուսուցիչների ուսուցիչները (մարդկության հնագույն մշակույթների մասին)” վերնագրով զեկուցմանը: Վերջինիս՝ Կովկասի և հաբեթյանների վերաբերյալ վերամշակված մասը 1917 թ. իբրև հոդված տպագրվել է Բաքվում լույս տեսնող հայկական “Գործ” ամսագրում (- 5–6, էջ 120–126)՝ “Մֆինքսեր ու վիշապներ (մի քանի գծեր հնագույն Կովկասի քաղաքակրթությունից)” վերնագրով: Աշխատության այս գլխում զետեղված է այդ հոդվածից մեջբերված հետևյալ խորհմաստ ամփոփումը. “Աստվածաշնչի այն ավանդության մեջ, որ պատմում է, թե ինչպես Նոյան տապանը կանգ առավ Մասիսի գագաթին, թերևս թաքնված է պատմական ճշմարտության մի մասնիկ. այն է՝ հիշատակը այն բացառիկ դերի, որ “Արարատյան տերությունները” (նմանապես Աստվածաշնչի մեջ գործածվող անուն) խաղում էին նախկին հազարամյակների քաղաքակրթական կյանքում (2 և 3 հազարամյակներում Բ. ծ. առաջ): Աստվածաշնչի համաձայն՝ մարդկային սերունդը նորից սփռվեց աշխարհիս երեսին Մասիսի կողմերից և ուրեմն այնտեղից տարածվեց ամբողջ աշխարհի քաղաքակրթությունը: Հրեա պատմիչները, որոնք այդպես կերպարանափոխել էին քաղդեական ավանդությունը համաշխարհային

ջրհեղեղի մասին, պիտի որ հիշեին, որ մի ժամանակ Արարատի կողմերից էր սփռվում իրանց երկրում գիտության լույսը, այնտեղից էին սպասում իմաստասիրության ու գեղարվեստի հայտնություններ և նրբացած կյանքի դասեր: Մասիսի շուրջը բնակված ազգերը հինավուրց հրեաների աչքում ամենից լուսավորյալներն էին բոլոր ազգերի մեջ” (էջ 115–116):

Այնուհետ Ա. Ջաքարյանը հանգամանորեն ներկայացնում է նաև Ա. Պուշկինի մահվան 80-րդ տարելիցին նվիրված երեկոյի ընթացքում Բրյուսովի դասախոսությունը՝ “Հասարակական հայացքները Պուշկինի պոեզիայում” վերնագրով զեկուցումը: Խոսվում է նրա էլույթների արձագանքների, կարդացած դասախոսությունների նշանակության մասին:

Գլխում մեջբերված է Բրյուսովի հեղինակած “Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը Ք. ծ. առաջ VI դ. մինչև մեր ժամանակները” ուսումնասիրությունից (հրատարակվել է 1918 թ. Մոսկվայի Հայկական կոմիտեի կողմից) մի հատված, որը Հայոց ցեղասպանության վկայություններից և թուրքական ժխտողականության դեմ ուղղված փաստարկներից է (էջ 124): Տեղեկանում ենք Արևմտյան Հայաստանի ճակատագրի նկատմամբ Բրյուսովի դիրքորոշման մասին: Այսպես, 1917 թ. Մոսկվայում լույս տեսած “Ինչպես դադարեցնել պատերազմը” գրքում, խոսելով “հաշտություն կնքելու անհրաժեշտության մասին”, նա այն կարծիքն է հայտնում, որ քննարկման և արդարացի լուծման ենթակա կարևորագույն հարցերից մեկն Արևմտյան Հայաստանի ճակատագիրն է՝ մինևույն ժամանակ դեռ աննպատակահարմար համարելով այնտեղ հանրաքվեի անցկացումը, քանի որ հայկական վիլայեթները կանխամտածված “զրկվել են” իրենց բուն ազգաբնակչությունից:

Այս գլխում խոսք կա նաև “Հայաստանի պոեզիա”-ի երկրորդ հրատարակության մասին, որը, ցավոք, չի իրականացել: Տեղեկանում ենք նաև, որ մեծ հայասերը մտադիր էր պատրաստել հայ արձակին նվիրված ժողովածու՝ “Հայաստան” խորագրով, որ եռանդուն համագործակցում, աշխատակցում էր Մոսկվայում հրատարակվող “Արմյանսկի վեստնիկ” շաբաթաթերթին՝ մասսայականացնելով և քարոզելով հայ գրականությունն ու մշակույթը:

Չորրորդ գլխում, որի վերնագիրն է՝ “Վ. Բրյուսովը և հայ գրականության դասականները (ստեղծագործական կապեր և համագործակցություն)”, հանգամանորեն խոսվում է Անդրկովկասի հայ ստեղծագործ մտավորականության (հատկապես Հովհաննես Հովհաննիսյանի և Հովհաննես Թումանյանի ու նրանց ընտանիքների) հետ Բրյուսովի ջերմ հանդիպումների մասին: Այս գլխում մեջբերված է Թիֆլիսում Բրյուսովի դասախոսությանը ներկա եղած Շիրվանզադեի “Իմ տպավորությունները” հոդվածից հետևյալ մեջբերումը. “Помилуйте, – ասաց բանաստեղծն իր դողդոջուն ձայնով, – դուք չպիտի լի-

ներ շնորհակալ ինձնից, այլ ես՝ հայ ժողովրդից, որը ինձ այսքան հաճույք է տալիս իր անցյալի անմահ ստեղծագործությամբ” (էջ 137–138): Մեկ այլ հատված՝ մեջբերված Ստեփան Զորյանի հուշերից, պատկերացում է տալիս Բրյուսովի՝ 1916 թ. Անդրկովկասում կարդացած դասախոսությունների՝ տեղի հայության վրա թողած ազդեցության և ունեցած նշանակության մասին: “Առանց չափազանցության կարող եմ ասել, – գրում է նա, – որ Բրյուսովի բանախոսությունից հետո մի ամբողջ շաբաթ, և ավելի տոն էր Թիֆլիսի հայերի համար, հայ բանաստեղծության տոն՝ բառիս ամենալայն իմաստով: Իմացանք, որ այդպես է եղել և Բաքվում, այդպես է եղել նաև Երևանում...” (էջ 138):

Աշխատության վերջաբանում ամփոփվում է գրքի գլուխներում շարադրված նյութը և արվում են համապատասխան եզրահանգումներ:

Իրոք, անգնահատելի են մեծ մտավորական ու հայասեր Վ. Բրյուսովի ծառայությունները Հայաստանին ու հայ ժողովրդին: Բրյուսովը և Հայաստանը հիմնահարցի վերաբերյալ, ինչպես հայտնի է, լույս են տեսել բազմաթիվ գրքեր, հոդվածներ ու հրապարակումներ: Մակայն 1916 և 1917 թթ. հունվարյան նրա ուղևորություններն Անդրկովկաս, կարդացած դասախոսությունները, շփումը հայ գրական-հասարակական կյանքի հետ՝ ըստ իրողությունների ժամանակագրության, հանգամանքների ու նշանակության, մինչ օրս հատուկ ուսումնասիրության առարկա չէին դարձել: Նշված հիմնախնդրի ուսումնասիրության և լուսաբանման մեջ դեռ չէին բացահայտվել, չէին գնահատվել շատ երևույթներ ու հարցեր, կային մի շարք հակասություններ, բացթողումներ և սխալներ: Ա. Զաքարյանի այս մենագրությունը լրացնում է Վ. Բրյուսովի գործունեության գիտական լուսաբանման հետ կապված հենց այդ բացերը, նաև քննադատորեն վերլուծվում է “Հայաստանի պոեզիա” ժողովածուն: Ասել կուզի՝ սույն աշխատության շնորհիվ առավել ամբողջական, համակողմանի են բացահայտվում, հայ և ռուս գրասեր հանրությանը ներկայացվում մեծ հայասերի գործն ու վաստակը:

Քանի որ “Հայաստանի պոեզիան” ժողովածուն հրատարակվել է 1916 թ., իսկ Ա. Զաքարյանի խնդրո առարկա աշխատությունը՝ 2016-ին, ապա վերջինս կարելի է համարել յուրօրինակ ընծա “Հայաստանի պոեզիան” ժողովածուի հրատարակության 100-ամյակին:

ՀՐԱԶՅԱ ԲԱԼՈՅԱՆ